

Մմբաս Բիւրաս

Կմբագրութիւն «Փիիկնիկ», Բ
Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45

ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ

ԿԱՆՆԻԿ Է

ՓԻԻԿՆԻԿ

ՏԱՐԵԿԱՆ... 15

ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ

ՏԱՐԵԿԱՆ Բպլ. 6



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇՈՒԹԻ 7 ՄԱՅԻՍ 1902

ԹԻԻ 49

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Փիիկնիկի Բ. ՏԱՐԵՇՐՁՄԵՆԸ լրանալու մօտ է, բայց Եգիպտոսի ու Արտասանմանի մեր բաժանորդներէն չառեքը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագրինը ՄԱՆՏԱԲՈՍԹՈՎ, մեր հասցէին:

Այսքան կրկնումներէ ի վեր կը զարմանանք որ մինչեւ ցարդ եւ ոչ մէկ մանսարօսք ստացանք մեր Պատ. բաժանորդներէն, որոնք սակայն կանոնաւորապէս կ'ստանան թերթը:

Կը խնդրենք որ ուշի ուշով կարգան այս սխիպողական, սխիպողական սողերը, եւ փութան մաքրել հաշիւներն:

Պուշկարիա, Ալեքիկա, Ռուսիա թէ Եգիպտոս, ո՛ւր որ կը գտնուին, փափազելի է որ շուտով եւ անչապաղ հասցընեն բաժանորդագրութեան չնչին պարտքը, որ կը կազմէ սակայն թերթին յարատեւութիւնն ապահովող գումար մը:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ ի դէպ մահուան իր ամբողջ հարստութիւնն ազգին ճակատը դրելու որոշումովը (°) կենդանութեանը մասնակի նպատակներ ընելէ հրաժարող անժառանգ հարուստներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ քաղաքակրթութեան տարրական մէկ պահանջը գոհացնելու համար բօֆերի սեղանին շուրջը զիշերներ լուսցնող ու օրհններ վատնող հայ լայք խումարագներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ ազգային ընթերցասրահին մէջ օտար լեզու մը սովորած ըլլալին ցուցադրելու սենդէն բռնուող ու ընթերցող ներկաներուն ականջները ուռեցնող անհեթեթ պարոններէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ այն բարեկամութիւններէն որոնք իրենց քանի մը փառաարժող ծառայութեան փոխարէն անպատճառ խուսկ կը պահանջեն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ զպրօցին մէջ իրենց նոր շրջան մըն ալ երաշխաւորելու յոյսով նորընտիր Թաղականներուն բոլոր տիքը շրջապատող տափակ թէ ողորոններէն, որոնք երբ հիմա բարձրաձայն կը դատապարտեն վարժարանին մէջ տիրող անկարգութիւնները. մինչեւ հիմա ինչո՞ւ պա-

պանձեր էիք. ա՛խ, կարսօնցու վարժապետներ.....

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ Թաղ. ընտրութեանց ատեն քուէսուէիք խորտակելու մէջ ամբողջ ազգասիրութիւն մը փնտռող ու ամեն առիթի մէջ, ինքզինքնին տրտուն ներկայացնելով, սաքով թաթով ու ձենձոտ քիթով մէջ նետուող անասնելի ազգային-ձիներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ կնաթող (աւելի ճիշդը կնոջմէն թողուած) ու դաւանափոխ թունդ ու ձախորդ հայրենասէրներէն, կամ իրենց խելքով, ազգային փրկիչներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ Վիշրապներէն զգուշանալու գիտական պատրուակով դժբաղդներու ձեռք չըպցնող ու անոնցմէ երես դարձնող բաղրատնդիր բժիշկներէ:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ Սանտրոպուռնու վարի եզկիներով դասէն ու խորանէն շարքի - շարական հրամայող ձայնաւոր դպիւր տէրտէրներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ ընաղդով ու խմբով արխսոգրաց ապրող բայց ժողովրդականութիւն խլելու աշկարաց դետուած սեւօգրաց ներկայացող բռնադրօսիկ դիվերէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ եղած խօստուճներէն Հայ նուազածուներուն որոնք համազրեատ ունենալու համար պիտի սպասեն որ Նիլ ի վրայ կառուցուած սպանիակալի դիվալի ՄԱՆԱՐԱՆէն պարբերաբար դուրս գան նախ մանածը, յետոյ կերպար, ու այսպէս, յաջորդաբար, չափել ձեւելը, կարել կարելը, եւն, եւն:

Այս հաշուով մօտաւորապէս կրնանք ըսել թէ խեղճ Հայ նուազածուներու խումբը պիտի կրնայ հազնիլ այդ հանդերձները հաշիւ . . . հանդերձալին մէջ:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ պիտեմնին ուղղաձրգօրէն դէպ ի վեր ձրձգնած ու շարժուն դիվալներն բարձրօններով զմտած պոռնկանոց բուրդ պողտասար երիտասարդներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ կուսակցութեան ամառվճրի ընկալադիրները՝ պոռնկն կախուած պատկերներուն քովիկը ցուցադրող յեղափոխականներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷՆՈՎ ԽՆԱՅԷ՝ անթաղ դիվալներու առջեւ խուռիկ ծխող բարեպաշտ երկրապագուներէն . . . :

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ, «թողցէ այր գնայր իւր եւ գնայր եւ երթիցէ գնէ կնոջ իւրոյ» էն անբաւական, «թող ազգ հայրենիք՝ ինկի՛ր առջեւ. . .» ըսող կնիկներէն ալ:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ ուրիշի մը հագած պլուզին մանածը մետաքսէն որոշելու նպատակով միայն եկեղեցի գնացող վարնոց կնիկներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ գորշեով սեղմուած իրձննուն ձեւը կորսնցնելու սոսկումէն հինգ ամսու երախանին վիժել սուտղ ձեղերաններէն . . . :

ԱՍՏՈՒԱԾ ԽՆԱՅԷ վերջապէս ժիրպլասի կաղ դերին նախանձը գրգռող լապտերը մարած գօլխիօննիէն, որ սա վերջին պահուն փողոցները ծուռուշիտակ չափչիկելով, թեւին տակի տօնիկին մէջի հանրագրութեան համար ո՛վ գիտէ քանի՛ առ 100 գօլխիօնով ստորագրութիւն ժողոււրտելու ելիր է . . . :

ԿԱՐԴԱԼ ՅԱԶՈՐԴ ԹԻԻԻՆ ՄԷՁ Պոյսոյ Ազգ. Պատրիարքարանին շուրջը վերնագրով շահեկան թղթակցութիւնը:

ՔՐՈՆԻԿ

Ա Ձ Գ Ա Յ Ե Ն

— ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻԻՆ ԱՎՓԱՐ, երբեմն խմբադիր շիջալոյս ՓԱՐՈՍԻՆ եւ այժմ յանձնակատար—գորգալաճառ, որ ժամանակէ մ'ի վեր քաղաքս կը գտնուի, հրապարակին հերոսը դարձած է այսօրերս: ՊՕՂՈՍ ԲԱՇԱՆ ԿՈՒԶԵՆԻ՝ իմաստով հանրագրութիւն մը ձեռքը, առտուրնէ մինչեւ իրիկուն կը պարտի կառքով, ստորագրութիւն կը ժողովէ: «Ազգասիրաբար Գանիրեէն յատկապէս իջած եւ, կըսէ, Աղեհասնորիոյ ազգային գործերը կարգի դնել տալու համար, Բաշան ձեր պապա՛ն է»:

Կը գովենք մեր բարեկամին ետանդը, միայն խորհուրդ պիտի տայինք իրեն որ վազ անցնէր այդ աւելորդ ծառայութիւնէն. Պօղոս Բաշան, ընտրողներուն թիւն ըլլալով 555, Թաղական ընտրուած է 549 քուէներով. ըսել է թէ Բաշային ժողովրդակամութիւնը նորէն ստուգելու հարկ չկայ, ինչպէս նաեւ միւս բոլոր նորընտիրներունը, որոնց ամենուն ալ պաշտօնին վրայ մտաւուն փափագող է տեղիս հասարակութիւնը:

Աստուած կարողութիւն տայ մեր ալեգարդ Սըբաղան Առաջնորդին, զի ՍԿԻԶԻՆ է ԵՐԿԱՆՑ...:

— ՀԱՅ ՆՈՒԱԳԱՍՏՈՒԱՑ ԵՌՈՒՄԲԸ
տեղիս նուպար Բաշայի պարտէզին առջեւ
Նեղոսի եղբորը հաւաքուած, Ապրիլ 29 ին
դէ. օրը, կառարեց իր հիմնարկութեան Ա.
Տարեգարձին հանդէսը, ի ներկայութեան
հոն խոնոզ բաւական թուով երկսեռ ազ-
գայիններու:

— ԿԱՐՄԻՐ ՎԱՐՂԱՆ Թասրերգու-
թիւնը, 5 արար եւ 6 պատկեր, Աղեքսան-
դրիոյ մէջ առաջին անգամն ըլլալով պիտի
ներկայացուի յառաջիկայ Կիրակի իրիկունը
ժամը Ձին տեղիս ծովեղբրեայ ԲԻՐԱՄԻՏ
Թատրոնին մէջ, առաջնորդութեամբ Դերա-
սանապետ Տիար Ս. Պէնլեանի:

Տոմսերը հիմակուընէ շրջաբերութեան
մէջ են ու կը ծախուին ՄԵՍ Մէնչիյէ, սե-
ղանաւոր Տ. Յակոբ Ճէրիտեանի քով:

Տեղիս Թատրոնայէր հասարակութիւնը
պէտք է փութայ իր ներկայութեամբ քա-
ջալերել սոյն ներկայացումը, որուն յաջո-
ղութեան համար ամեն ջանք ի գործ դըր-
ուած է յարգելի Դերասանապետին կողմէն:

Հետեւաբար, կրնանք այժմէն յուսալ
թէ՛ Կարմիր Վարդանը պիտի գտնէ սպա-
ռած ընդունելութիւնը տեղիս հասարա-
կութեան կողմէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ՁԻԿԱՌՕԻ 21 Ապրիլ թուակա-
նով պոչասկան թղթակցութենէ մը կը
հաղեմի հետեւեալը:

«Հիմակ եր հաստատուեցաւ թէ
Փատիչահին դահաժառանգը ո՛չ մե-
ռած է ո՛չ ալ հիւանդ, թերեւս շահե-
կան է բառ մ'ըսել իշ մասին:

Եւրոպացիները քիչ կը ճանչնան
զանի. մեկուսի կ'ապրի, Բերայէ հե-
ռի, Երլարզ քէօշկէն անդին, Վասփո-
րին իշխող բլուրներուն բարձունքը,
Թարապիտայի ճամբուն վրայ: Կամուռը
բանտարկեալ մըն է ընդարձակ կալ-
ուածի մը մէջ ու իր արդեւրակ
կեանքին ա՛լ վարժուած է: Կը պարա-
պի պարտիզպանութեամբ ու ծառա-
մչակութեամբ: Որոնք որ զինք կը
ճանչնան, կ'ապշահովեն թէ անի գրե-
թէ երջանիկ է:

Հիմակ, յաջորդութեան կարգը
հետեւեալն է.

1. Գահատառանդ, Ռեշաս, Սուլ-
թան Մէճիտի որդին, 58 տարու (Հա-
միտին եղբայրը):

2. Քեմալ էս սիւն, Սուլթան Մէճի-
տի որդին (Համիտին եղբայրը) 55 տա-
րու:

3. Իգլէսսիւն, Սուլթան Աղիզի որ-
դին, 45 տարու:

4. Սիւլէյման, Սուլթան Մէճիտի
որդին (Համիտի եղբայրը) 42 տարու:

5. Վահիս էս սիւն, Սուլթան Մէ-
ճիտի որդին (Համիտի եղբայրը) 41
տարու:

6. Սալասիւն, Սուլթան Մուրատի
որդին, 35 տարու:

7. Ապսիւլ Մեճիս, Սուլթան Ա-
ղիզի որդին, 35 տարու:

8. Սեյիւն, Համիտի անդրանիկ որ-
դին, 32 տարու (ծն. 11 Յնվ. 1870).

9. Սեյիւն էս սիւն, Սուլթան Մու-
րատի որդին, 30 տարու:

10. Թեյլիզ, Համիտի մեռած
մէկ եղբոր որդին, 27 տարու:

11. Չիւսսիւն, գահաժառանգ Ռե-
շատի որդին, 25 տարու:

12. Ապսիւլ Դասիւր, Համիտի որ-
դին, 24 տարու:

13. Ահմէս, Համիտի որդին 24
տարու:


14. Նեմալ էս սիւն, գահաժառանգ
Ռեշատի որդին, 21 տարու:

15. Պարհաւն էս սիւն, Համիտի
որդին 17 տարու:

16. Ապսիւլ Հալիւն, Համիտի մէկ
եղբոր որդին 12 տարու:

17. Ճեմալ էս սիւն, Սուլթան Ա-
ղիզի թոռը, 11 տարու:

18. Ապսիւլ Բահիւն, Համիտի որ-
դին 10 տարու:



ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՀԱՅԻՆ

Մարտի 23 Ապրիլ 1902

Դատեան վարդապետին թողնենք որ Զուարթնոց նշանաւոր աւերակների պըրպըտումներովը քաւէ իւր հրապարակային յանցանքները, եթէ երբէք ազգին օրոտակար մի ծառայութիւն մատուցանելու ճշմարիտ գաղափարն ու զղջալու խղճմտանքը մնացել է սրտումը: Մենք դառնանք մեր պատմութիւնը շարունակելու:

Սալմաստի ժողովրդեան առ ու ծախսի վայրերն են, Դիլիմանի եւ հին քաղաքի շարաթական երկու - երեք անգամ նշանակուած հրապարակային տեւտուրը — բազառը — որ ինչպէս յիշում եմ, Կիւրակէ օրերը Դիլիմանում, իսկ հինգշաբթի օրերը հին քաղաքում տեղի են ունենում, որ տեղեր գտնվում են շուկայի նմանութիւն ունեցող կարգ մը մեծ ու փոքր կրպակներ. որոց թւում խիստ քիչ հայեր էլ են գտնվում, բացառութիւն համարելով մի քանի մեծ հայ վաճառականները, խանութպաններ եւ արհեստաւորները, որոնք միայն ցորեկները գնում են խանութներ ու երեկոյներն իրենց գիւղերն են վերադառնում Դիլիմանից: Հին քաղաքում հարիւր անից աւելի հայեր են բնակվում. մնացեալները բոլոր պարսիկ ու հրէայ են, առանձին թաղերով բաժանուած: Այս գիւղաքաղաքի Արեւելահիւսակողմի այգիներէ մօտերը գտնվում է Բաֆու նկարագրած Արաքսկան միւսարեքը, մի հասակեկ, կիսափուլ ու թրձուն աղիւսներով կառուցուած հնութիւնը, որը դարերի ընթացքում տակաւին այցելուների ուշադրութիւնն է զբաւում իւր եզակի շինութեան վերայ: Այս գիւղի շրջականերից են տանում գրեթէ Սալմաստի ամբողջ բնակիչները իրենց նորաչէն տուների համար գոյնգոյն սրբատաշ քարերը, զորս պատրաստում են տեղւոյն հայ քարտաշները: Նշանաւոր են այս գիւղաքաղաքի մօտերը գտնուող «Ջարեւանդ» անուն աղբիւրը, խաղողի զանազան տեսակները, «Իււաւ - Չահ» կոչուած յայտնի ապաստանարանը, ուր ապաստանողները զերծ կը մնան պատժուելէ, եթէ Պարսից Շահն անգամ մանուան վճիռն արձակած լինի հոն ապաստանող յանցաւորի վերայ. ուր

ապաստանեցան տասնի չափ փախտական հայերը 1896 թուականի Յունիսեան ամսին, երբ Վանէն փախչող հազարաւորներէն մնացած թիւը միայն կը կազմէին, եւ որոց հետամուտ էին եղել հազարաւոր պարսկահպասակ քիւրդերը, պաշարած լինելով հին քաղաքը փախտական հայերը պահանջելու եւ տեղն ու տեղը կոտորելու համար, ու չը կրցին ուժով դուրս հանել, ուստի քանի մ'օր վերջ ազատուելով հայոց գիւղերը ցրուեցան:

Հին քաղաքի մօտերը կը գտնուի Սալուս գիւղը: Խաչագողների այս նշանաւոր բնակավայրը օժտուած է բնութեան շնորհած առատ եւ բազմակողմանի յարմարութիւններովը, որ գրեթէ Սալմաստի գիւղերի փայլուն աղին է համարվում: Այս գիւղի բնակչաց երեք մասը պարսիկներ են եւ մի մասը հայեր: Խիստ քիչ բացառութեամբ կարելի է տեսնել այս գիւղում այնպիսի տուներ, ուր մի քանի մանկահարսներ չը լինին, որոց էրիկները մի քանի ամիս միայն մնալով իրանց դժբաղդ կանանց մօտ՝ հեռացել են աշխարհի ամեն կողմեր իրենց հին արհեստն ի գործ դնելու: (Բացառութիւնները խիստ հազուադէպ են լինում): Այս գիւղում ապրում է Ռոստոլում բնակութիւն հաստատող միլիոնատէր Յունանեան եղբարց քոյրը՝ Տիկին Թագուհին իւր զաւակներով, որի միջոցաւ բարեգործական նուէրներ է ցրվում «Տօլվաք» անուն անժառանգ եղբայրը, որը խիստ կրօնատէր մի անձնաւորութիւն լինելով, դեռ անցեալ տարի մօտ հարիւր զոյգ մեծ ու փոքր զանգեր, եկեղեցական զգեստներ եւ անօթեղէններ ուղարկեց Ստրպատականի բոլոր եկեղեցիներին: Չանգերի երկու զոյգն այնքան խոշոր տեսակներէն էին, որ ինչպէս տեսանք մեր իսկական աչքերով, ցարգ մնում են երասիկ եզերքը (Ռուս Պարսկական սահմանազուխը) «Շանրախը» անուն գիւղում, Սալմաստում փոխադրուելու զժուարութիւնների պատճառով:

Սոյն գիւղի իգական սեռն աւելի հասարակական գործերի են խառնվում քան այլ մարզիկ, վասն զի վերջինները խիստ հազուադէպ են այս գիւղում. եղածներն էլ մեծաւ մասամբ գործի անընդունակ ծերունիներ են: Սոցա բարոյական անկումի պատճառները մանրազնին հետախուզութիւններով երեւան հանել է արդէն մեծա-

հանձար Բաֆֆին, որ իբրև Սալմաստի զաւակ՝ ամէնից լաւ իմաստասիրել էր իր ժամանակի մարդկանց բնութիւնները. մնում է մեզ ներկայի հայութեան բնատոմիկ կեանքից գրելու, վասն զի Մեծ Հայ Վիպասանի գրած ժամանակից քսանէն աւելի երկար տարիները սահել ու անցել են, եւ այսքան ժամանակամիջոցում՝ ոչ միայն մարդկային սերունդը փոխուել է, տեղացիներից շատերը զանազան երկիրները գաղթելով ու նոցա տեղերը նորերը գալով, այլ եւ շինութիւնների եւ մարդկանց կրած տարազների մեծ մասը բարեփոխուել է, անշուշտ խրատուելով անմահ Բաֆու շինիչ խարազանների հարուածներէից: Բայց եւ այնպէս տակաւին մնում են այս զեւղում Քաւոր Պետրոսների թողնիկները, որպիսիք կարող են չը ցանած վայրերից հունձքերը գոյացնել. ինչպէս այս կարգին պատկանողներից միոյն պատահեցայ չորս տարի առաջ, երբ պաշտօնով Թաւրէզից Սալմաստ ուղարկուեցայ: Պարսիկ մօլլաների - սեյիդների միջոցաւ մի՞շտ շինծու մուրհակ էր ձեռք բերել. որով իբրեւ թէ 25 թուման պահանջ ունեցել էր համազիւղացի հանգուցեալ կալուածատէր մի հայ անհատի վերայ, մուրհակի թուականը 5-6 տարով առաջ գրուել էր հանգուցեալի մահուան օրից, երբ հանգուցեալի ժառանգորդները տիրանալ էին ուղեցել իբրենց կալուածքներին, խաչագողը իւր ձեռքում ունեցած կեղծ մուրհակի զօրութեամբ ամեն գործողութիւնները կատարած՝ արդէն տիրացել էր մի ընդարձակ արտի, եւ որպէս իւր սեփականութիւնը համարուած մի կալուածի նման մշակում ու արդիւնքը վանձում էր: Ժառանգորդները հրասթափուած այս անակնկալ վարմունքէն, հաղար ու մի միջոցներով անգութ վաշխառուի ձեռքից ազատել ջանացել էին իրենց ժառանգական կալուածը: Հակառակ ծախսուած գումարներին, զորս վճարել էին միմեանց ետեւից շուա շուա փոխուող պարսիկ դատաւորներին, վաշխառուն ամենայն հանգստութեամբ վայելում էր կալուածքի անարդար արդիւնքը. իւրաքանչիւր անգամ բողոքներ տեղի ունենալուն՝ մի մի մաս դատաւորներին բաժին հանելով: Երկար ու ձիգ տարիների ը թացքում 25 թումանը (թումանը՝ հաւասար է եղիպտական մի սիլալին) վաշխառուի քմահաճոյական հաշուով 6000 թումանի էր բարձրացել, ան-


շուշտ տոկոսի տոկոսները, դատաստանական ծախքերը միմեանց վերայ բարդելով: Եւ՛րձ ժառանգորդը, տասն անգամից աւելի Թաւրէզ ու Թէհրան էր դիմել իւր արդար դատը շահելու յուսով, այլ ամեն անգամին լի յոյսերով ետ էր դարձել ու վերստին յուսախար էր եղել, զուցէ կալուածի կրկին զինը ծախուել՝ ու չէր կարողացել դատը շահել, մինչեւ այն օրը՝ երբ մենք Սաւրեցի նոյն վաշխառուէն հրաւէր ընդունեցինք իւր տունը գնալու: Իւր իսկ սեղանի վերայ անիրաւ լինելը իւր բերանով բռնուեցաւ ի ներկայութեան բազմում մի թիւ անձա ց, եւ ուր վճռեցինք յիսուն թուման վճարել տալ եւ հողը ժառանգորդին յանձնել: Հետեւեալ օրը վարել տուինք հողը իւր օրինաւոր ժառանգորդին:

Պարսկաստանում՝ առաջնորդները եւ նոցա փոխանորդները զատաստանական ու ժառանգական խնդիրներում ընդարձակ տեղ են բռնում, նոցա վաւերացուցած կալուածագրերը, որին տեղացիք «հեօջաք» են ասում եւ կտակագրերը օրինական են համարում ամեն դատարաններում: Նոյնպէս օրինական են համարվում արտօնութիւն ունեցող ցեղական մօլլաների կամ սէյիդների գրած ծախում ու գնումների կալուածաթղթերը, բաւական է որ մի քանի արժանահաւատ վկաների կնիքները դրուին գրուած թղթի կտորներին վերայ:

(Շարունակելի) Ն—ԵՐ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ԷՍԹ ՈՒԷՍԹԻ



Բարից 19 Ապրիլ 1902

Օրինակ թո՛ղ առնեն հայ կիները.
 Գործակալութեանս Խալեբէն հիւղին սսացած քերթերուն մէջ հեհեւալ խիստ հեժաբիբ լուրը կը կարգանք, որուն վրայ մասնաւոր կերպով կը հրալիբեմք հայ կիներու ուսալութիւնը:
 — Նէապօլսի Նօչէրա գիւղըն սպրող Մասսալէնա Կրանաթա անուն կնոջ ի նյալս հանրագրութիւն մը կը պսցցնեն Նէապօլսի եւ քղակայ վայ-

րերուն մէջ. Հանրագութեան ստորագրողները կառավարութենէն (Իսալական) կը խնդրեն, Մասսաչէնս Կրանարաի՝ սարեկան 1:00 ճր. յատկացնել, մինչեւ անոր մահը. Այդ կիներն այսօր յիսուն եւ եօթ սարեկան է եւ անկարող է իւր սագրուսը հայթայթելու:

Այդ պատկառելի կիներ՝ կենացը մէջ միայն սասն եւ ինը սարի ապրելով իւր էրկան հետ, աշխարհ բերեւ է *վարսուն երկու* զաւակ, որոց յիսուն ինը՝ մանչ եւ երեքը՝ աղջիկ:

Ինն սարուան մէջ սասն եւ մէկ անգամ իրարու վրայ, այդ կիներ, ծնեւ է երեք երեք զաւակ, երեք անգամ ծնեւ է չորս մանչեւ միանգամայն, եւ մէկ անգամ աշխարհ բերեւ է հինգ մանչ եւ մի աղջիկ միանգամայն: Իսկ սասնեկու անգամ նա աշխարհ բերեւ է 12 երախայներ՝ անհասապէս, թէպէտ իրարու շատ մօտիկ ժամանակամիջոցով:

Ս.հաւաստիկ Չեզ ամէն տեսակէտով յարգանաց արժանի կիսն մը որ իւր գեանքին մէջ իւր արտադրողի դերը կատարեւ է ոչ միայն խղճմանով, այլ եւ պարզապէս զմայելի կերպով: Եւ ահա ասոր համար է որ Նէապօլսի ժողովուրդը իրար անցած է միջամտելու որ իսլական կառավարութիւնը վարձատրէ այդ իւր տասակին մէջ անզուգական հերոսուհին:

...

Եթէ մեր պատմութեան միջին դարերու անցողիկները յիշենք ու երեւակայութեամբ մեր աչիներուն առջեւ պատկերացնենք այն հազար ու մէկ հակասամարտները, պատերազմներն ու ընդհարումները, որոց մասնակցեցաւ մեր ցեղը. եթէ մտաբերենք այն հսկայական կռիւները զորս մղեց հայ ցեղը՝ աշխարհի պատմութեան ամենահին ժամանակներէն՝ Տրովադայի պատերազմէն սկսած մինչեւ նորագոյն բուրք

բռնակալները. եթէ խորհինք այն հակասամարտներուն վրայ զորս հայ ազգը Պարսիկներու, Ասորեստանեայց, Պարթեւներու, Եգիպտացոց, Ասորոց, Հռովմայեցոց, Յունաց, Աւարներու, Մոնղոլներու եւ հազար ու մէկ մեծ ու պզտիկ ցեղերու հետ ունեցաւ եթէ մտածենք թէ հպարտ եւ գոռացող Հռովմըն իւր հազարաւոր լէգէոններով եւ հայրսագոյն զօրավարներով, սասնեակ սարիներ պատերազմելով, հազիւ կրցաւ Հայաստանի մէկ չնչին մասին տիրել եւ մնացած մասերուն միապետն իբր թագաւոր ընդունել կամ հանչնալ, ու այդ կէս յաղթութեան համար Հռովմայ մէջ արձան կանգնեցնել տուաւ ինկզբնէր տիրեցեքի տէր կարծող Հռովմը. եթէ մտածենք թէ Հռովմա-Հայկական պատերազմի տարիս Հռովմայ սեմաթի ամենայայնի Տրիբունները ահագին մարտեր խօսեցան. եթէ յիշենք թէ քննուախօս յոյները եւ մեղկացած բիւզանդեան կայսրները՝ հակառակ իրենց դրկիցութեան, չկրցան հայերը նուանել... այս բոլոր նկատողութիւններէն երկու եզրակացութիւն կարելի է հանել. առաջին՝ թէ հայերը խիստ բազմամարդ ազգ մը կը ներկայացընէին, անքիւ բանակներու դէմ պատկառելի զնդեր հանելու համար, երկրորդ՝ թէ հայ ցեղը առաջնակարգ ծննդաբեր մը, բազմածին մը եղած է:

Յիրաւի մեր հին պատմութեան մի քանի էջերուն համեմատ, հայ ազգը իւր ամենափայլուն շրջաններուն մէջ ամենուազն 25-30 միլիոն ժողովուրդ ունեցող պետութիւն մը կը ներկայացընէր. եւ այդքան ալ պէտք էր լինէր, քանի որ մի քանի անգամ հարիւր հազարներով զօրեւ պատերազմի դաշտը հանեց:

...

Բայց այն երանելի ժամանակները անցան, աւա՛ղ, աննկարագրելի պա-

սուհասներ հասան մեր ցեղի գլխուն. պատերազմ, գերեվարութիւն, կոտորած, հրդեհ, երկրաշարժ եւ այլ նմանը չեստնուած արեւածներ ու պատահարներ, բռնի կրօնապիտիւթիւններ, անդազար գաղթելու հակում, եւն եւն, մեր ցեղին մուխը մարեցին, անոր արիւնը ծծեցին ու ցամփեցուցին: Դեռ նոր՝ կենդանի նիւաղի մը հրամանով, երեք հարիւր հազարէ աւելի հայեր անհետացան, մօտ կէս միլիոն այրիներ, որքեր եւ սովեալներ թողով, ամայացած, անմարդացած, քանդուած բայց դարձեալ մեզ համար՝ երեք չորս անգամ արբազնագոյն մեր հայրենի հողին վրայ . . . :

Բայց այդ անալիս հարուածէն մեկ վնասելու թուլանալու չենք, մեր ցեղը խիստ շատ անգամ, դժբաղդաբար, այդպիսի հարուածներ կրած է, բայց ամենուն տակէն ելած է յաղթական, միշտ յարատեւող, միշտ կանգուն. . . յիշենք իբր օրինակ Վարդանի ժամանակները, աւելի մօտակայ ժամանակներու մէջ Շահ-Աբասի գործերը, ձիւկիզ Խանի, Լէն թիմուրի արշաւանքները. . . Այդ բոլոր արշաւողները, բռնակալները կարծեցին թէ Հայ ցեղը, Հայ ազգը ոչնչացուցին, անհետացուցին. բայց եթէ այսօր իրենց գերեզմանէն դուրս գալու լինէին, պիտի տեսնեն թէ չարաչար սխալուած են. . . : Եթէ Հայ ցեղը մինչեւ օրս կրած պատահասներէն չէ մեռած, չէ ոչնչացած, նա ասկէ յետոյ այլեւս բնաւ երբէք չ'անհետանար, որովհետեւ նա իր աչքը բացաւ. . . :

Գալով Հայ ազգին կրկին բազմանալուն, այդ կախում ունի Հայ կիներէն եւ երիտասարդներէն: Օ՛ն Տիկիւններ, եթէ կը սիրէք Ձեր հայրենիքը, եթէ կը սիրէք Ձեր ցեղը՝ որուն պատկանելիք Ձեր պմենամեծ փառքը լի.

նելու է. եթէ կուզէք որ Հայ ազգը նորէն տասնեակ միլիոններով հառուալի, նմանեցէ վերայիտեալ Իսալուհույն եւ ազգին տուէք, շատ, խիստ շատ զաւակներ, մեռածներուն տեղ տասնապատիկը, հարիւրապատիկը տուէք ազգին: Մեր արդի կացութեան մէջ, այդ Ձեր ամենասուրբ եւ ամենանուիրական պարտականութիւնն է առաւել քան երբէք:

ԲԱՐԻՉԻ ՀԱՅ ԿԵՆՔԷՆ

Բարիք 26 Ապրիլ 1902

Մի քանի տարբեր աղբիւրներէ մեզ լուր կը հասնի թէ Բարիզի հայ դպրութեան թեմայի մի ստուար մասը հանգանակութիւն մը բացեր է պարոն Մ. Գալիաքճեանի դատաւարութեան և դատապարտութեան ծախքերն — ընդամէնը 600 ֆր. լսեցինք — վճարելու համար, առարկելով որ պարոնին մղած պայքարը դպրութեան կողմէ եղած լինելուն, պէտք է որ նոյն դպրութեան թեմայի անոր կրած ֆրանսերուն տեղը լեցնէ: Մի քանի անձեր կը տեսն թէ հանգանակութեան հասցիքը շատ գոհացուցիչ եղեր է և արդէն բոլոր ծախքերը փակուած են:

— Est-Ouest գործակալութեանս, նոյն իսկ առաջին թղթակցութեան մէջ կ'աւետէինք թէ Բարիզի մէջ շուտով լոյս պիտի տեսնէ հայերէն նոր հանդէս մ'ալ և անոր անունը պիտի լինէր «Հայ Հանդէս»: Մենք այդ հանդիսի կէսը տպագրուած տեսանք Բարիզի հայ տպագրիչ պարոն Միսաք Պաղտասարեանի տպագրատան մէջ, և այն ժամանակ կատարեալ ապահովութիւն կար թէ այդ հանդէսը մէկ շաբաթէն կամ տասնեակէն օրէն լոյս կը տեսնէ: Բայց անկէ ի վեր երկու ամիսն արդէն անցաւ և դեռ հանդէս չի կայ հրատարակի վրայ: Այժմ կը

Լսենք թէ այդ «Հանդէս»ը լոյս չի պիտի տեսնէ... և թէ գլխաւոր հրատարակիչը կամ խմբագիրը միտք ունի եղբր հրատարակէն քաշուելու, նոյնպէս և... աշխարհէն:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹԻԷԿ

ԿԱՐԵԻՈՐ Ա.ԶԴ

Եգիպտոսի կառավարութեան ու պետական կարեւոր անձնաւորութեանց եւ նոյն իսկ մասնագէտներու կողմէն գնահատուած Եգիպտոսի Գարսիսը, որուն վրայ ժամանակին ա'յնքան գովեստներով խօսեցաւ ՓԱՐՈՍը եւ զոր պատրաստած է մեր համակրելի երկրաչափներէն ՏԻԱՐ ՌԱՅԱՅԷԼ ՆՇԱՆՆԱՆ, մինչեւ ցարդ պատրաստուած քարտէսները կը գերազանցէ:

Այդ յարգի ու ընտիր քարտէսէն ունենալ փափագողները կրնան դիմել ՏԻԱՐ ՀՈՎԵԼ ԿԱՐԻՆՆԱՆԻ քով, Փիւնիկի խմբագրատունը կամ Արաֆի տպարանը:

Գինն է 5 ֆրանգ.

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրիացի հայ երիտասարդ մը, սարիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած, Երուսաղիմի քաղաքէն լեզուներու հմուտ, ու քաջ արարագէտ միանգամայն, պատրաս է վաճառականաց արարներէն թղթակցութիւնները կատարել գոհացուցիչ պայմաններով:

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրատնոց կամ «ԱՐԱՔՍ» ի տպարանը:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիներէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Իւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզոր-Փոխանորդ

ՄԻՂԱՆ ԳԱԼՃԱՆԱՆ

Աղեփասնորիա, պզտիկ Մեկնիե Ապտասուս փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանգ